

ըու հետքեր կը նշմարուին, բայց եղծուած լինելով չեն կարդացուիր: . . . Ով որ Հայաստանի մէջ շրջագայած է և կիսաւեր վանքերն ու եկեղեցիները տեսած, առաջին նայուածքով կարող է վկայել որ Էլ-Բիրէհ գիւղի եկեղեցին հայկական եկեղեցի է և Պաղեստինի մէջ նշանաւոր հայկական հնութիւն. . . : Զարմանալի է որ Պ. Վոկէ, իւր «Եկեղեցիք Ս. Երկրի» անուն տեղեկագրական գործոյն մէջ, առանց որևիդէ հաւանական փաստի, յիշեալ եկեղեցւոյ շինութիւնն իտալերաց կ'ընծայէ, գոնէ չը նկատելով, որ եկեղեցին բնաւ լատինական ձեւ չունի» (Սիոն, 1875, Յունիս, էջ 136-37): Մենք իրաւունք կուտանք Մուրատեան վարդապետի շիտակ գիտողութեան, նկատի առնելով Գոնտէրի և Քիչնէրի գծագրած յատակագիծը, անոր սիւներուն և խոյակներուն գծագրութիւններն, ընդհանուր շէնքին ճարտարապետական կառուցուածքը և հայեցի արձանագրութեանց հետքերը, որք բացարձակ կերպով կը հերքեն Տը Վոկիւէի և այլոց կարծիքները: Ինչպէս տեսնք վերև, Տը Վոկիւէ ինքն է որ կը գրէ թէ՛ Էլ-Պիրէհի եկեղեցին շինուած է Պրոպատիկէի Ս. Յովակիմ-Աննա եկեղեցիին նմանութեամբ և ճարտարապետութեամբ. վկայութիւն մըն է այս իրեն աննպաստ, վասնզի Պրոպատիկէի եկեղեցին ի սկզբանէ հայկական եղած է, ըստ ցուցակի Անաստաս վրդ. ի «Եւ ի ներս քաղաքն Արշակունեաց վանքն, ի Սուրբ Պրոպատիկէ կողմանն». և մենք այս պարագան հաստատած ենք այլ ապացոյցներով ևս (տե՛ս «Տարեցոյց» Ս. Գափամաճեան, 1926): Փաստ մը չէ որ Ֆուանկները, առաջին իտալերաց ժամանակ, տիրացած են անոր. և Երուսաղէմի լատին առաջին ինքնակալը՝ նոյն եկեղեցին Էլ-Պիրէհ գիւղովը, Ս. Գերեզմանին կալուած արձանագրած է. նմանօրինակ դէպք մըն ալ, նոյն միջոցներուն, պատահած է Երուսաղէմի Ասորիներուն, որոնց մէկ եկեղեցին, պարտէզներով կը գրաւէ Կոստֆրոայի զէնքի ընկերներէն Ժէօֆրօա, որուն պատճառաւ, շատ տարիներ, բանտարկուած կը մնայ Գահրէի մէջ, և Երուսաղէմի հայ եպիսկոպոսին միջնորդութեամբն է որ ան կ'ազատի հայազգի Վահրամին շնորհիւ (Abbé Martin, Les premiers princes croisés et les Syriens Jacobites de Jérusalem):

Վերևի բացատրութեանց հաստատութեան համար կը թարգմանենք Camille Enlart ի «Les Monuments des Croisés, dans le Royaume de Jérusalem», հոյակապ գործին մէջ զետեղած (Բ. Հատ.,